

9(42.925)

25910.

2-85 Հովհաննիսյան, Ա.
"Հաճախ-պին կրիպիւր":

1524.

17/2

462

2/20

744

293

286



ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

„ՀԱՄԱԶԳԻԱՅԻՆ

== ԿՐԻՋԻՍԸ ==

(ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ)

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1926

Դրանկազմար № 330p.

Տիրաժ 5.000.

Պետհրատի լեկտրոնի տպարան Յերևանում.

1.

Պրագայում հրատարակվող բելոգվարդիական «Волга России» ամսագրի այս տարվա յերկրորդ գրքում Վ. Մինախորյանը — Ս. Վրացյանին բախտակից Հայաստանի ես-եր «փրկիչներից» մինը — գրում է՝

«Խորհրդային Հայաստանում ընդունված է Նոյեմբերի 29-ը «Հեղափոխական հաղթությունների» որ համարել. այդ նշանակալից օրը բայլշևիկները «փշրեցին Հայաստանի հակահեղափոխական պարլամենտի դռները և բարձրացրին յերկրում կարմիր դրոշակ»։ Մինչդեռ հայտնի լե բոլորին, վոր վորևե «խշխանության հեղափոխական գրավում» Հայաստանում տեղի չի ունեցել, վոր այդ խշխանությունը հանձնվել է նրանց՝ գոյություն ունեցող կառավարության կողմից վորոշ դաշնագրի հիման վրա, վորպիսին նրանք կցեցին արխիվի գործերին վորպես «թղթի պատան»... «Պատմությունը — շարունակում է Մինախորյանը — այդ տխուր օրերի մասին գիտե մի ճշմարտություն. հեղափոխություն, իբրք, յեղել է, բայց՝ բայլշևիկյան «գրավումից» առաջ ու հետո է՝ նրանց դեմ։ Հեղափոխությունից առաջ տեղի ունեցավ համաժողովրդական հեղափոխական պատերազմ, վոր իսկական սպանդանոց դարձավ Ջաջուռի վրա, Սուրմալվում, Դաշբուռունի և Կարսի տակ, Արփաչայի մոտ։ Հաղթությունը տարավ Քյաղիմ Կարա-Բեքիր փաշան՝ մահիկն ու կարմիր սատղը

կրծքին»։ Յերկրորդ «հեղափոխությունը», վորի մասին ակնարկուած է Մինախորյանը, 1921 թ. փետրվարյան ապրտամբությունն է։

Մինախորյանը մատնուած է այստեղ ես-երական միամտություն, յենթագրելով, վոր հեղափոխության մեջ երականը արտաքին եֆֆեկտն է, դռներ փշրելը, կամ գրլուխ ջարդելը։ Ուստի աճապարուած է հիշեցնել դեկտ. 2-ի դաշնագրի մասին, վոր արժեք ունի բացառապէս միայն, վորպէս հեղափոխության արտաքին եպիդոդներից մինը։ Յերբեք և վոչ մի տեղ տիրող դասակարգը հոժարակամ չի զիջուած իշխանության դեկը։ Յեւ շփոթել իշխանության փոխանցման առանձին միջադեպերը նրա հենակետների խորտակման արյունոտ պրոցեսի հետ կարող են միայն մարդիկ, վորոնք մտքի տկարություն են հայտնաբերում սոցիալական յերևույթների ըմբռնման մեջ կամ տկար մտքեր ցանում՝ մասսաների ըմբռնողության առողջ բնագղը կաշկանդելու հաշվով։

Տեղի ունեցել էր տրամադրությունների մասսայական բեկում նոյեմբերի նախորեյին։ Կար ուժերի հեղափոխական կուտակում տիրող կարգերի դեմ։ Ստեղծված յեղել է հեղափոխական ճգնաժամ յերկրի ներսում, վոր լուծել է այնուհետե իշխանության սոցիալական փոխանցումը։ Յեւ ապա «դաշնագրի հիման վրա», իշխանություն «հանձնելու» մասին։ Ի՞նչ էր այդ տիրողների ազատ կամաարտահայտություն, թե՞ քաղաքական անխուսափելի անհրաժեշտություն, վոր հիմք ուներ յերկրի ներսում տեղի ունեցող սոցիալական բեկումներն ու բաղխումները։ Ավելի՞ արժեք ուներ դաշնական ստորագրած «Համաձայնագիրը», քան ունեյին ցարական դինաստիայի հրովարտակաները Փետրվարյան հեղափոխության որերին։

«Հեղափոխության համար — գրում է հեղափոխու-

Թյան մեծագույն վարպետը — բավական չե, վոր շահագործվող յեվ ննեվող մասսաները գիտակցեն ըստ հնույն ապրելու անկարելիությունը յեվ պահանջեն փոփոխություն. հեղափոխության համար անհրաժեշտ է, վոր շահագործողները չկարենան ապրել ու կառավարել ըստ հնույն: Միայն այն ժամանակ, յերբ «վարիները» չեն կամենում յեվ յերբ «վերիները» չեն կարող ըստ հնույն, միայն այն ժամանակ կարող է հաղթանակել հեղափոխությունը: Այլ ձեվով՝ այդ նշմարությունն արտահայտվում է ա սպես. հեղափոխությունն անհնարին է առանց համազգային (յե՛վ շահագործվողներին, յե՛վ շահագործողներին շոքափող) կրիզիսի»: (Լենին), «Детская болезнь левизны в коммунизме», Пет. 1920. էջ 76 և հետ.):

Լենինը համարում է այս ճշմարտությունը՝ «հեղափոխության հիմնական որենք, հաստատված բոլոր հեղափոխությունների և մասնավորապես 20-րդ դարի առումական յերեք հեղափոխությունների միջոցով»:

Յեվ անդրադառնալով ահա Հայաստանի Նոյեմբերյան հեղափոխության պրոբլեմին անհրաժեշտ է, վոր հարց տանք մեզ. — կար «համազգային կրիզիս» մեզանում: Վոր — չափով եր արդարացնում Հայաստանի Նոյեմբերը Լենինի նշած «հիմնական որենքը» իշխանության հեղափոխական գրավման մասին: Այս է հիմնական խնդիրը:

2.

«Հեղափոխություն» Նոյեմբերի 29-ից առաջ: «Համաժողովրդական հեղափոխական պատերազմ» կարսի պատերի տակ: Ահա Մինախորյանի «համազգային կրիզիսը»: Մինախորյանը հետևողական չե գեթ իր տեսակետից: Վորովհետև սա կրիզիս եր առանց սոցիալական բաղխումքների, մի պատերազմ՝ գրեթե անարյուն, տերի-

տորիայի մի փոխանցում՝ առանց դիմադրութեան, վոր-
տեղ մնաց «հեղափոխութիւնը»: Հեղափոխական ի՞նչ նը-
պատակ էր հետապնդում հայ-թրքական պատերազմը:
Դաշնակցական «նախարարներին» մինը, Արտ. Բաբայա-
նը, խոստովանելով յուրայինների մեղսակցութիւնը պա-
տերազմն սկսելու գործում, նշում է, ի միջի այլոց, այդ
ձեռնարկի բուն նպատակը: «Պատերազմը—գրում է Բա-
բայանը—սկսեցինք մենք, վորովհետեւ ձգտում ունեյինք
գրավել Ութիի ամբողջ շրջանը և ձգվել դեպի Սև-ծով՝
մեր փրկութեան հանգրվանը: Մենք, վորովհետեւ կամե-
ցանք գրավել Բարդուսը, առանց վորի անլարելի յեր
Բասեն մտնել: Մենք, վորովհետեւ պատրաստվում էինք
ուժեր կենտրոնացնել Կարսում, կամենալով գտնան Սևրի
դաշնագիրը մեր ուժերով իրագործել»: («Հայրենիք» ամ-
սագիր, 1923 թ. հոկտեմբեր, էջ 63): Կարիք չկա մեր
տրամադրութեան տակ յեղած բազմաթիվ այլ աղբյուր-
ներից կոչում անել ապացուցելու համար, վոր «հեղա-
փոխական» պատերազմը նպատակ ունեւ ուժերի ունալ
փոխհարաբերութիւն ստեղծել Սևրի դաշնագիրն իրագոր-
ծելու համար: Դաշնագիր, վոր սրբագործե էր իմպե-
րիալիստական Անտանտան և վորի կենսագործման համար
ազգային մեծ ու պստիկ «դիպլոմատները» հայցում էին
անգամ բարոն Վրանգելի որհնութիւնն ու աջակցութիւ-
նը: Տաճկաստանում տեղի ունեցող իրական հեղափոխու-
թեան հանդեպ Սևրը նույնը պիտի լիներ, ինչ յեղել էր
Բրեստը ռուսական և Վերսալը գերմանական հեղափո-
խութեան հանդեպ:

Սակայն Սևրի դաշնագիրն ունեւ դաշնակների հա-
մար նաև ներքին իմաստ: Նա կոչված էր շուտ տալու
հայ մասսաների ուշադրութիւնը կարմիր Ռուսաստանից
դեպի դեղին Յեվրոպան: Հայ բուրժուազիայի «անկա-

խուլթյունը» հեղափոխության արտաքին գրոհի և նրա «միությունը»՝ հարազատ մասսաների ըմբոստացման հանդեպ. դաշնականների համար Սևրի դաշնագիրն այդ իմաստն ունենր մայիսյան ապստամբությունը ճնշելուց հետո: Կարո՞ղ ե այդ պայմաններում «համաժողովրդական» հռչակվել դաշնագրի իմաստը կենսագործելու կոչված պատերազմը: Կարո՞ղ եյին զինվորական այն իսկ մասսաները, վոր դիմադարձ լինելով դեպի Խորհրդային Ռուսաստանը, ապստամբել եյին դաշնականների դեմ գարնանը, կռվել նրանց առաջադրած նպատակների համար աշնանը — միանգամ իրենք իսկ դաշնականները չեյին թագցնում մասսաներից, վոր պատերազմը վարում են հենց հեղափոխության դեմ, Տաճկաստանի ազգային հեղափոխական շարժումներից յելած Քեմալի կառավարության և Ռուսաստանի պրոլետարական հեղափոխությունից յելած Խորհրդային իշխանության դեմ: Չե՞ վոր, ինչպես հասկացնում եյին զինվորներին իրենք դաշնականները, «մահիկն ու կարմիր աստղը կրծքին ամրացրած» Կարա-Բեքիրը շարժվում եր «Խորհրդային Ռուսաստանի ցուցմունքներով»: Յե՞վ դեռ ավելին: Ռուս-տաճկական զինակցության լեգենդը դաշնականները ծաղկեցնում եյին՝ պոռալով ամենուրեք, վոր Հայաստան արշավող տաճիկները գալիս են հայ բայլշևիկների ուղեկցությամբ...

3.

Դաշնակցականներն իրենք եյին, վոր կատարում եյին... մեր գործը: Տխմար պրովոկացիան ունենում եր իր յենթադրածին հակառակ արդյունքներ: Դեղին սերմերը տալիս եյին կարմիր պտուղներ: Ցարական բանակից դաշնականներին ժառանգություն մնացած զենքերալներն ու ոֆիցերները, վորոնց նշանավոր մասն անցել եր սպիտակ բանակների խողովակներից, ընկճված «թշնամու գերա-

զանց ուժի» ուրվականից ու սարսափահար մանավանդ
բայլշնիկյան ճիվաղից՝ համակվում են նահանջի տրամա-
դրություններով, նահանջի, վոր հոգեբանորեն անխուսա-
փելի յեր Դենիկինի և Վրանգելի պարտություններից
հետո: Իսկ շարքային զինվորները և մասնավորապես մա-
յիւյան ապստամբության մասնակցած «շորագյալցիները»
— այդ անունը հետզհետե «դասալիքների» հոմանիշ եր
դառնում — վորոնք վոչինչ պատճառ չունեյին սարսափե-
լու ռուսական կամ բայլշնիկյան «վտանգից», սկսում են
համոզվել, թե Կարա-Բեքիրն ավելի լավ ե, քան նրա
հռչակը, վոր պատերազմը կարմիր բանակայինների հետ
«միացած» ասկյարների դեմ հայ բանվորի և գյուղացու հա-
մար վոչ միայն անհնարին ե, այլև՝ անիմաստ... Այս գի-
տակցությունն ե, վոր դառնում ե հետզհետե լայն մաս-
սաների սեփականություն:

«Համաժողովրդական» պատերազմի առաջին շրջա-
նում, 1920 թվի հոկտ. 4-ին, Դաշնակցության Յերևանի
կոմիտեն ուղղում ե ներքին գործոց մինիստրության
գաղտնի մի գրություն — այս, ինչպես նաև վարը հիշվե-
լիք գրեթե բոլոր գրությունները բերում ենք Հայաստա-
նի պետական արխիվից՝ թարգմանաբար կամ բնագրից
առնելով, — վոր մատնանշում ե հետևյալ յերևույթը. —
«Մեր կուսակցական ընկերները և կուսակցության նշա-
նակած բոլոր վերահսկիչները միաբան վկայում են, վոր
ներքին գործոց նախարարության ստորին պաշտոնեյու-
թյունը և միլիցիան անհանդուրժելի վերաբերմունք են
ցույց տալիս դեպի նորակոչ զինվորները և նույնիսկ
դեպի ազատ քաղաքացիները: Ծեծն ու հայհոյանքը սիս-
տեմ են դարձած»: Պատերազմի դեմ սկսվել եր խուլ
տրտունջ: Զինվորացուները խուսափում են մոթիլիզացիա-
յից: Լճահանուր տրտունջ եր սկսվում նաև քաղքենիական

լայն շերտերի մեջ: «Միացյալ և անկախ» Հայաստանի պետականությունն այն վահանն էր, վոր խոյանալով հեղափոխության ներքին և արտաքին ուժերի դեմ, պետք է պաշտպաներ ազգային քաղքենիության կյանքն ու գույքը, բաց աներ նրա առաջ նյութական բարգավաճման ուղիներ, նեցուկ դառնար նրա տիրապետության: Ջարդերի ու կոտորածների, թալանի ու կռիվների միջոցով հաստատվեց այդ «պետականությունը», վոր իմպերիալիստական բուրժուազիայի դուռը բաղխող մուրացկանի ցուպ դրեց Հայաստանի ցրտահար ու սովահար աշխատավորության ձեռքը: Սակայն գործադրված միջոցները վերջի վերջո վոչ միայն բարեկեցության յեղջուր չդարձան հայ քաղքենու համար, այլև հեղափոխական ցնցումների, պատերազմական վայրիվերումների ու ֆիզիքական սարսափի խորխորատ բացին նրա առաջ: Այդ եր պատճառը, վոր անգամ տաճկական արշավանքի մղձավառնը չներշնչեց քաղքենուն «յերկիրն ու իշխանությունը» պաշտպանելու «հայրենանվեր» մղումը: «Հարազատ» իշխանությունն անշահավետ մի բարիք էր, «անձնվեր հայրենասիրությունը» – անխորհուրդ շռայլություն:

Դաշնակցության կերտած ազգային-քաղաքական շաղախը փլվում էր: Ռազմական պարտությունը նախապատրաստվում էր մասսաների մեջ տեղի ունեցող սոցիալական բեկումների միջոցով: Հեղափոխությունը հասունանում էր վոչ թե պատերազմի համար, այլ պատերազմի դեմ, վոչ թե «բայլշնիկների դեմ», այլ բայլշնիկների ոգտին, մայիսյան ապստամբության հարթած ուղիներով:

4.

«Համաժողովրդական-հեղափոխական պատերազմը» առաջ էր բերում ժողովրդական-ապստամբական շարժում

դաշնակցական Հայաստանում ամենից շատ հալածված ազգային փոքրամասնությունների կողմից: Հոկտեմբերի 10-ին Վրացյանը և Բաբալյանը հաղորդում են Կարսից, վոր Զարուշատում ունա գյուղացիները «լոյալ մնալու» խոստում են արել: Դաշնակ այդ մինիստրները պատանդ են վերցնում տեղական թուրքերից, վորոնց հանձնում են Սեպուհին՝ պահելու իր մոտ, մինչև Արդահանի գրավումը: Սեպուհը, չբավականանալով դրանով, կոչ է անում թուրքերին, վորտեղ սպառնում է պատժել, յեթե համարձակվեն շարժվել տեղից: Վոմն կապիտան Թառայան, պատրվակ բռնելով ինչ վոր «ապստամբություն», թալանում է մի շարք թյուրք գյուղեր, իսկ գյուղացիներին բռնում բնակավայրերից: Արդահանի շրջանի քրդերը, խմբապետական հալածանքից սարսափած, «լոյալ» դիրք եյին գրավել դեպի դաշնակները. «բայց—հայտնում է—ուղիղ հեռագրաթելով Կարսի նահանգապետ Ղորղանյանը—Սըմբատի խումբը և մեր մյուս զորամասերի վարմունքը տեղահան արեցին Զալաուսից մինչև Արդահան ու քրդերը փախան Քուռ գետի ափերն ուր և պատսպարվեցին Կադիմովի հեղինակության տակ, վորն արգելեց քրդերին շարժվել դեպի տաճկաց բանակը»: Կադիմովը, ինչպես հայտնվում է նույն գրությունից, Ղորղանյանի ազենտներ: Յերբ նրան ձերբակալում է Արդահանի հեծելազորը, նրա շուրջը խմբված քրդերը քաշվում են Մերդենեկ:

Այս ու նման յերևույթները բնորոշում են ինքյան դաշնակցական ռեժիմն ու միաժամանակ՝ պատերազմի «հեղափոխական» արժեքը: Սակայն ազգային փոքրամասնությունները «լոյալ» դիրքերում չմնացին միշտ և ամենուր: Տակավին սեպտեմբերի կեսերին դաշնակների կրած պարտությունները Հայաստանի ռազմական շտաբի պետ Պրիտոմանովի մի տեղեկագիրը մեծ չափով ապստամբ

փոքրամասնութիւններին եւ վերագրում: «Ապստամբած-
ները գրում եւ շտաբի պետը — մեր զորքի թիկունքում
գրավել եյին բոլոր հարմար դիրքերը և իրենց դիպուկ
կրակով ու հարձակումների մշտական սպառնալիքով մե-
ծապես դժվարացրին մեր զորքերի նահանջը»: Կարսի ան-
կումից հետո դաշնակցական զորամասերն անցան Ղըզըլ-
Չախչախ: Սակայն այստեղ ևս Աղբաբայի թուրքերի ա-
պստամբութիւնը, վորին միանում եւ թիւրքերի առաջ-
խաղացումը, միանգամայն վերացնում եւ դաշնակների
«դիմագրության» տրագիկոմեդիան: Դաշնակներն ըն-
դունում են թիւրքերի եռոմից առաջարկված զինադա-
դարի պայմանները:

5.

Յեթե ազգային փոքրամասնականութիւնների հակակա-
ռավարական ընթացքը բնորոշում եւ պատերազմի «հեղա-
փոխական» արժեքը, ապա ազգային մեծամասնության
բռնած հակապատերազմական դիրքը գալիս եր վորակելու
նրա «ժողովրդականության» չափը: Կարսի անկումից հե-
տո գեներալ Ախվերդովն իր և գեներալ Սիլիկովի անու-
նից չլիսավոր զորահրամանատարին ներկայացրած շիֆր-
զեկուցագրի մեջ ի միջի այլոց գրում եւ. — «Կարսի տակ
մեր կրած անհաջողության և զորքի ներկա դրության
պատճառը յես այն եմ համարում, վոր, առաջին, գնդերը
յերկու յերրորդական մասով յի յեն համոզված դեգերսի-
ներով, յերկրորդ, ռֆիցերներին մեծ մասը թույլ են և
կովի մեջ չեն վայելում զինվորների վստահությունը,
յերրորդ, հրամանատարները նույնպես թույլ են և ան-
շնորհք հրամաններով սպանել են զինվորների հավատը,
հավատը դեպի ղեկավարութիւնը»: Վարչապետ Ռհան-
ջանյանին Ալեքսանդրապոլից ուղղած հեռագրում Ռուբեն
փաշան նույեմբերի 5-ին ընդգծում եր նույն հիմնական

միտքը. — «Մեր գործերը չեն կամենում կռվել, ուզում են հաճոսություն: Այս պայմաններում անհնար է շարունակել պատերազմը»: Իսկ գեներալ Սիլիկովը նույն ուրը գեկուցում էր. — «Զորամասերն ինֆնակամ թողնում են Փրոնսր. զինվորները խմբերով փախչում են մասերից և նույնիսկ չեն կատարում իրենց պետերի հրամանները: Լքումն ու կազմալուծումը զարգանում է արագ տեմպով»:

Նույն դրությունն էր մյուս ֆրոնտներում: Շարուրի ֆրոնտից գեն. Շելկովնիկովը նոյեմբերի 16-ին գեկուցում էր զորահրամանատարներին. — «Զինվորները բոլորովին չեն կռվում և ամբողջ վաշտերով փախուստի լեն դիմում՝ թշնամու հեծելագնդերի՝ Լյուխի գնդացիներով և կարմիր դրոշակներով փոքր խմբեր լերևալուն պես»: Նույն գեներալը հաջորդ ուրը հաղորդում է Ավշար գյուղից. — «Մակեդոնը գեկուցում է անձամբ. վոր յերկրորդ գնդի զինվորները խոսքի բռնվելով իր ձիավորների հետ, հայտնել են, վոր իրենի չպիտի կռվեն. վորովհետև նրանց դեմ կանգնած են ուս բայլեվիկները (Նախիջևանի շրջանում գործող կարմիր բանակային ջոկատի մասին է խոսքը. Ա. Հ.) և վոր նրանք նույնիսկ ագիտացիա յեն տարել իր (Մակեդոնի) ձիավորների մեջ: Յերկրորդ գնդի հրամանատարը հայտնում և, վոր իր գունդը միանգամայն անուսղմունակ է, վոր իր միակ հույսն Աղաբեկի ձիավորներն են և սպասվող կամավորները: Նամարլվում և շրջակայքում կազմակերպված է դասալիքների վորս, բայց դասալիքումը տեղի յե ունենում գիշերները»:

Դաշնակցական Հայաստանն ստանում էր դասալիքված բանակի կերպարանք: «Պատերազմում» էյին միայն խրմբապետական գնդերն ու դաշնակ կամավորները: Իրենք բրդել էյին, իրենք էլ պիտի ուսեյին, տյախնքն, կազմակերպեյին պատերազմի վայրերում ջարդեր քրդերի և

Թուրքերի դեմ, թալանելին «լքյալ» գյուղեր: Պաքսիզանական այգայիսի մանր, տեղական «գործողություններին» դենը չեյին անցնում նաև Մինախորյանի կողմից մեծարվող ընդհարումները Սուրմալվում, Դաշբուռունի մոտ, Արփաչայի ափին: Իսկ Կաֆսը: Արժեք խոսք վատնել դրամասին: Չե՞ վոր հանրածանոթ փաստ է, վոր այդ բերդաքաղաքը հանձնվեց Կարա-Բեքի փաշային առանց մեկ հատիկ գնդակ արձակելու:

Պատերազմը «համաժողովրդական» չեր, ղինվորները չեյին կամենում կռվել դաշնականների առաջադրած նպատակների համար: Ավելին: Փոխաբերելով ներկա գեպին Լենինի պատկերավոր մի արտահայտությունը՝ շինել հագած հայ գյուղացիները, լքելով պատերազմի դաշտը, «վտարելով անվստահություն են քվեարկում» քաղաքական տիրող ռեժիմին:

6.

Նուեմբերի 5-ին թյուրքերը գրավեցին Այեքսանդրապոլը: Քաղաքացիական գործերի համար տեղում կազմվեց «կոալիցիոն մարմին», փորի մեջ մտան նաև բայլշեվիկներին մի քանիսը: Բանտին հաղիվ արձակված, ամիսների ընթացքում անհաղորդ քաղաքական ճշմարիտ իրադարձերին, մեր ընկերներն ևս յենթարկվել եյին դաշնակ թերթերի այն «ինֆորմացիային», թե Կարա-Բեքին արշավում է ռուսների հրավերով, թե տաճիկների գործը խորհրդային Ռուսաստանի և կոմունիստական կուսակցության գործն է ըստ ամենայնի... Սխալ ինֆորմացիային արվում է սակայն այն ճիշտ յեզրակացությունը, վոր ստեղծված դրության համար միակ յելքը կարող է լինել միայն Հայաստանի սովետիզացիան ռուսական Կարմիր բանակի ոգնությամբ: Նույն այդ յեզրակացությունը հանում էյին ինքնաբերաբար իրենք մասսաները: Շիրա-

կի գյուղացիները քշում են դաշնակ լիազորներին և «սավետակի վլաստ» — խորհրդային իշխանութիուն հայտարարում տեղերում: «Սավետակի վլաստ» նոյեմբերի 6-ին հայտարարվեց Քյաֆթաուլի շրջանում, այն իսկ վայրում, վոր ակտիվ պայքար եր տարել դաշնակների դեմ մայիսյան ապստամբության որերին:

Նոյեմբերի 13-ին, թուրքերի լերկրորդ ուլտիմատումից հետո վերսկսված պատերազմական գործողութիւնների ժամանակ, գյուղացիության հակադաշնակցական տրամադրութիւններն ստանում են «դավաճանության» և «մատնչության» կերպարանք: Ահա թե ինչ եր գլում դրա մասին զինշտաբի պետին վոմն Կոտուրսկի. — «Հակառակորդի կողմից գրավված վայրերից յեկողները պատմում են ամբողջ գյուղերի դավաճանության և մատնչության մասին: Դա դեռ քիչ ե. գյուղացիները հրավիրում են թուրքերին, առաջնորդում են նրանց և ցույց են տալիս մեր ուժերի և խուզարկու հեծելախմբերի տեղերը: Գրաված վայրերում խիստ զարգացած ե բայլշեիկների աշխատանքը»: Նոյեմբերի 24-ին դեն. Ախվերդովը հաղորդում ե ռոտմիստր Մելիք-Աղամովի բերած տեղեկութիւնները. — «Ալեքսանդրապոլի շրջանի հայերը խիստ անբարյացակամ ընդունելութիւն են ցույց տվել իրեն և բազմիցս ցանկացել են մատնել իրեն թուրքերի ձեռքը: Շատ գյուղերում ազգաբնակչութիւնը գրգռված ե և զինվորականներին թշնամի յե համարում իրեն: Իլխիարի և Քյափանակ գյուղերում պարզված են կարմիր դրոշակներ: Փոքր Քյափանակում քահանան կարդում եր ծխականներին Ալեքսանդրապոլի կոմիտեյի հրատարակած պրուկլամացիան: Փոքր Քյափանակ գյուղում ռոտմիստրը հանդիպել ե տաճիկ հետախույզներին՝ հայ գյուղացիների ուղեկցութեամբ. տաճիկներին զիմավորել են աղ ու հա-

ցով: Գյուղերում կանայք ճաշ են պատրաստում կաթսաներում: Ոֆիցերի հարցումին, թե ում համար ե այդ, պատասխանել են՝ ի հարկե ձեզ համար չե, այլ թյուրքերի»:

Նոյեմբերի 16-ին Ալեքսանդրապոլի բանվորները կոմունիստական կուսակցության տեղական կազմակերպության ղեկավարությամբ խորհրդային դրոշ բարձրացրին, ստեղծելով տեղում «Հայաստանի հանրապետության ռազմահեղափոխական կոմիտե»: Քաղաքի և շրջակայքի իշխանությունն անցավ այդ կոմիտեյին: Ինչքան ել այս հանգամանքը, իրենք, տաճիկները նպաստավոր դրություն չհամարեյին դաշնակներին մեկուսացնելու տեսակետից, խորհրդային մտայնության աճումը և համանի այն կողմը՝ թյուրք գորահրամանատարության շրջանից դուրս գտնվող գյուղացիության մեջ խոշոր բարդություն եր առաջացնում կարա-Բեքի ի համար: Չարաչար պարտված դաշնակների փոխարեն՝ նա գործ պիտի ունենար խորհրդային Ռուսաստանին հենող բայլշևիկյան Հայաստանի հետ: Այսպիսի պարագաներում անհավանական չե, վոր դեռ ևս նոյեմբերի 13-ին Ղալթախչիի շրջանում կազմակերպված մասսայական ջարդը կարա-Բեքի ի պատասխանը լիներ Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի շրջանի գյուղացիության «ռուսասիրական» տրամադրություններին: Մինախորյանի հիշած «Ջաջուռի սպանդանոցը» համենայն դեպս վոչինչ կապ չունի ջարդված գյուղացիության պատերազմելու կամ դիմադրելու «համաժողովրդական խանդավառության» հետ: Նման փաստարկությունը կարող եր կարա-Բեքի ի համար պատեն ծառայություն լինել միայն Ջաջուռի կոտորածն արդարացնելու համար:

Ալեքսանդրապոլում հռչակված «խորհրդային Հայաստանից» դուրս հռչակելով «Յերևանի հանրապետություն-

նը», տաճիկ հրամանատարությունը, կամենալով կանխել Հայաստանի խորհրդայնացման հնարավորությունը, աճապարեց վերսկսելու ընդհատված բանակցությունները դաշնակիցների հետ: «Յերրորդի» միջամտությունն ստեղծված պարագաներում կարող եր ուժերի անցանկալի հարաբերություն ստեղծել հաղթական հրամանատարության և պարտված կոնտր-ազենտի միջև:

7.

Ներկա հոգվածում մեզ զբաղեցնողը նույնաբերյան հեղափոխության նախորդելիս Հայաստանի ներսում ծավալվող մասսայական-հեղափոխական շարժումն է և հեղափոխության այն «համազգային կրիզիսը», վոր առաջացավ մասսայական-հեղափոխական այդ շարժման ընթացքում և այդ՝ Մինախորյանի շոշափած հիմնական խնդրի սահմաններում: Ուստի կանգ չենք առնում հաշտության շուրջը դաշնակիցների ու թյուրքերի վարած բանակցություններին, ինչպես նաև հեղափոխության նախորդելիս Հայաստանի շուրջը ձևավորվող միջազգային-քաղաքական հարաբերությունների վրա: Բավական է վերհիշել միայն, վոր Վրանգելի կրած վախճանական հարվածից հետո արտակարգ թափ պիտի ստանար Անդրկովկասում խորհրդային ազդեցությունը, հանգամանք, վոր չեր կարող չանդրադառնալ անգամ դաշնակցական շարքերի վրա, արագացնելով սրա շերտավորումն ու կազմավորվածման պրոցեսը: Նույն անգամանքն անդրադառնում եր նաև տաճիկների հետ վող բանակցություններին, հաղորդելով սրանց չափազանց լարված բնույթ: Անդրկովկասում կուսակվող միջազգային ռազմական-քաղաքական ուժերի այդ նոր հեղափոխական ջրապտույտի մեջ եր, վոր, պատերազմի ընթացքում տեղի ունեցած սոցիալական ներքին բեկումներից ան

Հայաստանում «վարիճները» չեյին կամենում և «վերին-ները» չեյին կարող այլևս «ըստ հնույն»:

Ռազմական պարտությունը կազմալուծում է վերջնականորեն հասարակական-տնտեսական տկար հենարանի վրա ճոճվող և «ազգային ինքնորիենտացիայի» դատապարտված դաշնակցական խմբապետների խարխլված պետականությունը: Վո՞րն եր այն ուժը, վոր պիտի տնորիներ Հայաստանի աշխատավորության բախտը՝ կարա-Ռեքիր փաշայի զորագնդերը, թե կարմիր բանակին կառչող Հայաստանի աշխատավորության իշխանությունը: Այսպես եր դրված հարցը:

Նոյեմբերի սկզբներից իշխանությունը գրավելու խնդիրը, վորպես փաղափակա՜ն հերթական, անմիջական խնդիր Հայաստանում արդեն իսկ վորոշված եր մեր կուսակցության համար: Խնդրի զործնական լուծումն զբաղեցնում եր Հայաստանի կոմունիստական կուսակցության արտասահմանյան բյուրոյին: Բյուրոյի պաշտոնական որդանը՝ «Տեղեկատուն»՝ նախապատրաստում եր մտքերը Հայաստանի աշխատավորության համար հերթական դարձած իշխանությունը գրավելու խնդրի շուրջը: Մայիսյան ապրիստամբությունից հետո Բագու բաշված Իջևանի և Դիլիջանի շրջանի հայ գյուղացիներից կազմված գունդը կենտրոնանում եր Հայաստանի սահմանագլխում՝ Ղազախում: Ոպերատիվ աշխատանքները ղեկավարելու համար յերկրի ներսում կուսակցությունը չուներ մասսայական կազմակերպություններ: Կուսակցության գրեթե ամբողջ ակտիվը կենտրոնացած եր այստեղ դաշնակցական բանտերում: Սակայն ընդհատակյա մանր խմբերն անցել էին կազմակերպչական աշխատանքների նաև յերկրի ներսում: Առանձնապես զարգանում եր այդ աշխատանքը Իջևանի շրջանում: Այդ շրջանի հետ սանձիջական կապ էին պահ-

պանուժ կուսակցութեան արտասահմանյան Բյուրոյի հրահանգիչները:

Դրութիւնը պարզվում էր որըստորե ի նպատակ հեղափոխութեան: Շատերից ավելի կանուխ հեղափոխութեան անխուսափելիութիւնը հասկանալի դարձավ Անտանայի Անդրկովկասյան ներկայացուցիչներին: Մերժելով դաշնականներին անմիջական ռզնութիւն, բրիտանական ներկայացուցիչ Ստոքսը խորհուրդ էր տալիս Հայաստանի կառավարութեան Թիֆլիսի ներկայացուցչին՝ «համաձայնութեան» յեզր գտնելու խորհրդային Ռուսաստանի հետ: Նախազգալով անխուսափելի տակնուվրայումները՝ կարսի անկումից հետո, Հայաստանի սահմանը լքեց իտալական միսիայի ներկայացուցիչ մարկիզ Դ'Ալբիցցին: Դրամական նպատակ ստանալով վարչապետ Ռհանջանյանից, նրա որինակին հետևեց Վրանգելի ագենտ գեներալ Զինկելիչը:

✓ Զուր չէր աճապարանքը: Հեղափոխական խմորումը ծավալվում էր նույնիսկ «Յերևանի հանրապետութեան» ներսում: Դրա արտաքին նշաններից մեկն էր դաշնականների «կառավարական ճգնաժամը»: Լքելով «ազգային ինքնաորինացիայի» ֆրազիոլոգիան՝ Դաշնակցութեան «հինգ վարդիան», բյուրոյականները, տակավին կարսի անկումից հետո թեքվել էին վճռականորեն տաճկական որինեւացիայի կողմը: Կուսակցութեան պաշտոնաթերթ «Հառաջ»-ը, կանխելով փետրվարյան «փրկիչներին», արժարժում էր այն միտքը, թե անհրաժեշտ է «հայ տաճկան» պատվար՝ սպառնացող «հայ-ռուսական» միութեան դեմ: Այդ անհրաժեշտ է, մանավանդ, փաստաբանում էր «Հառաջ»-ը, «ազգային պետականութեան գաղափարը» — հասկացիր՝ դաշնակցական տիրապետութեան սխտեմը — կայուն պահելու համար: Կուսակցութեան տրագիկոն

քաղաքականութիւնը ներհակող այս քարոզը խորացրեց միայն շփոթն ու բարոյալքումը հարազատ շարքերում: Ջաշուկի կոտորածի մասին ստացվող լուրերից սարսափահար քաղքենու գիտակցութեան մեջ Դաշնակցութեան «նոր կուրսը» բեկում առաջացրեց հոգուտ խորհրդային որիենտացիայի: Յերեվանում խորհրդային միսիայի շենքը դարձավ ընդհանուր հետաքրքրութեան առարկա: «Ի՞նչ են մտածում բայլշևիկները» — ահա մի հարց, վոր հուզում էր բոլորին:

Այս պայմաններում էր, վոր ուսանակեր Ռհանջանյանի կաբինետը տեղ արեց «ուսանաւոր» վրացյանին և իրեն... Վ. Մինախորյանին: Բայց ուշ էր արդեն: Ղարաքիլիսայի, Դիլիջանի և Իջևանի գյուղացիութեան մեջ աճում էր որը-որին մասսաների հեղափոխական խմորումը, նախապատրաստվում նրանց քաղաքական յեղույթը: Վոշ վոքի շեր մոլորեցնում անգամ Մինախորյանի պատվական ժպիտը, նրա «անբիծ» քաղաքական զգեստը:

8.

Դաշնակ-եսերական կաբինետի հիմնական խնդիրն էր, ինչ գնով ել չլինի, հաշտութիւն կնքել թուրքերի հետ և, ոգտագործելով Խորհրդային Ռուսաստանի «շարյացական դիրքը» դեպի հաշտութեան բանակցութիւնները, տաճկական ուժերին հենված, ըստ կարելույն, անհնարին դարձնել կարմիր բանակի միջամտութիւնը Հայաստանի ներսում արծարծվող հեղափոխութեանը:

Դաշնակ—եսեր վարիչների առաջ ևս դրված էր հիմնական այն խնդիրը, վոր հետապնդում էր «Հառաջ»-ը: «Փրկել» Հայաստանի «ազգային պետականութեան գաղափարը», ասել է՝ «փրկել» հայ բուրժուազիայի ու քաղքենիութեան դասակարգային տիրապետութեան «սկզբուն-

բը», ինչ ել չարժենա այդ ինչ հետևանք ել չունենա
այդ Հայաստանի բանվոր ու գյուղացի լայն մասսաների
համար: Այդ տեսակետից դաշնակ-եսերական «կոալիցիան»
պատրաստ եր ստորագրելու, և ստորագրեց ի վերջո,
հաշտության մի դաշնագիր, վոր անլուր նվաստացման
գնով խոստանում եր գեթ «սկզբունքային յերաշխիքներ»
Հայաստանի բուրժուական «պետականության» ճանաչման
ու պաշտպանության համար:

«Սկզբունքային» այդ «յերաշխիքները» սակայն ան-
գոր եյին արդեն դաշնակների կազմալուծվող հանրապե-
տությունը փրկելու համար: Զինադադարի պայմանագիրը
կնքելուց հետո՝ տաճիկները, պայմանագրի «մեկնաբանու-
թյան» կարգով, նորանոր պահանջներ եյին առաջադրում
դաշնակներին: «Խաղաղություն» ապահոված լինելու հա-
մար Վրացյանի կառավարությունն ստիպված եր նահան-
ջել այդ պահանջների առաջ. այսպես, որինակ, Գարալա-
գյազի սահմանագծի խնդրում: Ոգտվելով ստեղծված կա-
ցությունից՝ վրաց մենշևիկները գրավել եյին Չեզոք Գու-
տին և արդեն ամրանում եյին Շահալիում: Չկար իրա-
կան վոչինչ յերաշխիք, վոր արտաքին կամ ներքին հեր-
թական «դժվարությունները» չեն հարկադրի դաշնակնե-
րին մոռալա որերը նորանոր նահանջներ անել, նետելով
յերկիրը մենշևիկների և կառաքեքիրականների կամայա-
կանության գիրկը: Ալեքսանդրապոլում բանակցություն-
ներ վարող պ. Խատիսովը և... Մինախորյանը պատրաստ
եյին ամեն կարգի «զոհաբերության»: Բնորոշ ե մանու-
կանդ Խատիսովի հաղորդագրությունն ուղղված Վրացյա-
նին: Հրահանգներ խնդրելով իր անելիքների մասին՝ Խա-
տիսովը հայտնում ե, վոր «ամեն պարագայում հաշտու-
թյան պայմանագիր ստորագրելու կողմնակից ե Մինա-
խորյանը, դեմ ե Զարաֆյանը»: Իսկ այն իսկ վայրկյա-

նին, յերբ Խատիսովը և Մինախորյանն Ալեքսանդրապոլի
 ոֆիցերական պալիլիոնում վայելում էին Կարա-Բեքիրի
 պատվական ճաշերը և, ինչպես գրում էր պ. Խատիսովը
 «մտերիմ» նամակներից մեկում, — վորի աննշան մի մասը
 միայն հնարավոր համարվեց հրապարակելու «Զարյա Վաս-
 տոկա» թերթում, — հույս ունեցին «լուծել ընդմիշտ հայ-
 տաճկական հարաբերությունների խնդիրը», տաճիկ առ-
 կյարները շրջապատել ու թաղանում էին «չեզոք գոտում»
 Խաչքիլիսա և Բաշքենդ գյուղերը: Այդպիսի պայմաննե-
 րում Հայաստանի բանակի վերջնական կազմալուծումը և
 դրա հետ միասին մասսայական-հեղափոխական շարժման
 ծավալումը յերկրում անխուսափելի պիտի լիներ: Յերե-
 վոլյթ, վոր արագացրեց հեղափոխական կատաստրոֆի
 ժամը և ստացավ իր բնական լուծումը նոյեմբերի 28-29
 գիշերը:

9.

Նոյեմբերի 28-ին, խմբապետ Սեպուհը Դիլիջանից
 ուղիղ հեռագրաթելով հաղորդում է Յերեվան, գորահրա-
 մանատարին. —

«Նախկին Չեզոք Գոտում դասալիֆները դիմադրու-
 թյուն են ցույց տալիս տեղական իշխանության: Միջոց-
 ներ են ձեռք առնված բայլշևիկների ագիտացիայի դեմ
 Զալալ-Ողլու շրջանում»:

Ավելի բովանդակալից է Սեպուհի մի յերկրորդ տեղե-
 կագիրը, վոր նույն օրը, կեսօրից հետո, հաղորդում է նա
 ուղիղ գծով Յերևանի կառավարության: Կարևոր այդ
 դոկումենտը հարկ ենք համարում թարգմանաբար հաղոր-
 դել այստեղ ամբողջովին:

«Այս բոսլեյիս — զեկուցում է խմբապետը — կապի-
 տան Խաչատրյանը հաղորդում է, վոր յերկրորդ, վեցե-
 րորդ և առաջին ռազմա-միլիցիոն վաշտը լքել են դիլ-

քերը և ցրվել տուն: Այսոր թողել են և գնացել նաև հինգերորդ և յերրորդ վաշտերը: Պահեստում (դիրքերի վրա) մնում է չորրորդ վաշտը, վորի վրա հույս դնել չեմ կարող: Հասնում է, վոր դասալիֆներ փախչելով գյուղերում հայտարարում են իրենց կառավարութունը: Շրջանում աղմինխատրացիան իշխանություն չունի: Ճանապարհներ, կտրված են և մնալիք: Բավականաչափ ուժ չունենալով չեմ կարող համապատասխան միջոցների դիմել: Կապիտան Սաչատրյանը զեկուցում է, վոր Ֆրոնտը միանդամայն բաց է մնացել: Պրովոկացիան և ագիտացիան մեծ չափեր են ընդունել: Պահանջվում է լուրջ միջոցների դիմել դասալիքությունը վերացնելու համար: Ներկայիս այդ շրջանը յենթարկվում է գեներալ Սանքալամովի զորաբաժնին: Իմ կողմից վոչինչ ձեռնարկել չեմ կարող, մանավանդ վոր կապիտան Սաչատրյանը, դրությունը վերականգնելու համար, պահանջում է 300 ձիավոր, 2 թընդանոթ և գնդացիներ: Բողանիս գյուղում սպա Սախումյանը դասալիքներ է ժողովել և բանտարկել՝ մասերը վերադարձնելու համար: Դասալիֆները հարձակվում են բանսի վրա՝ իրենց ընկերներին ագասելու համար և փորձել են ձերբակլելու սպա Սախումյանին, բայց նա ազատվել է: Խնչպես յերևում է Բողանիսի և Ղազախի շրջանում տեղի յեն ունենում մեծ անկարգություններ: Կարգը վերականգնելու համար անհրաժեշտ է կտրուկ միջոցների դիմել: Խնչպես զեկուցում է ինքը կապիտան Սաչատրյանը, հարկավոր են ձիավորներ ու թնդանոթներ դասալիքներին հավաքելու, պատժելու և մասերի միջև վերաբաշխելու համար: Նրանց տեղ անհրաժեշտ է նշանակել Բողանիսի և Ղազախի շրջանների համար նոր մասեր, վորպեսզի հնար լինի ապահոված համարել այս ֆրոնտը: Յեթե կառավարությունը թույլ տա ինձ և տա

Թնդանութներ, ա՛յժապես 300 ձիավոր կուղարկեմ այն-
տեղ կարգը վերականգնելու համար: Ներկայիս հնարավոր
եմ համարում ձիավորներ ուղարկել այնտեղ, վորովհետև
մինչև զինադադարի վերջը դեռ ժամանակ կա: Յեթե
վճռական միջոցների չը դիմենք, նրանց զործողություն-
ները կանդրադառնան այստեղի զորամասերին: Խնդրում
եմ այս մասին տեղեկացնել զորահրամանատարության
և հետևանքները մասին հայտնել ինձ առավոտը կանուխ»:

Դաշնականների հենարանը բացառապես կամավոր և
խմբապետական հեծելախմբերն էին: Այդ ուժերով Սե-
պուհը խեղդել էր մայիսին՝ Ալեքսանդրապոլի, Կարսի,
Նոր-Բայազետի և Ղազախի ապստամբությունը: Նույն
ուժերով կամենում էր հիմա խեղդել բռնկած հեղափո-
խությունը: Բայց ուշ էր: Իջևանի գյուղացիները, հարե-
լով գիւվորների ապստամբության մասսայական հան-
րագրելով դիմում էին սահմանի ան կողմը՝ խնդրելով
Կարմիր զորքերի աջակցությունը դաժնակ կառավարու-
թյունը սապալելու համար: Նրանք գիտակցում էին, վոր
առանց այդ ոգնության դաշնականների և տապալներ Կա-
րա-Բեքիրը կամ լավագույն դեպքում, հենվելով վերջի-
նիս վրա, դաշնականները կարող էին աճապարել տապալե-
լու հեղափոխությունը: Դաժնակ կառավարությունը «չե-
կարող ըստ հնույն», սակայն «չե՛ին կամենում ըստ
հնույն» ևսել Հայաստանի մասսաններ, Յերկրի սահ-
մանագլխին կանգնած էր արդեն կուսակցության արտա-
սահմանյան Բյուրոյի կազմակերպած Հայաստանի Ռադ-
մա-հեղափոխական կոմիտեն, վորն անցնելով սահմանի
այս կողմը՝ նոյեմբերի 29-ի լուսաբացին հրապարակած
Դեկլարացիայով տապալված հայտարարեց դաշնականների
կառավարությունը և հռչակեց յեկրում խորհուրդների
իշխանություն: «Ղազախի գունդը» մտնում էր արդեն

Իջևանի գյուղերը՝ հանդիպելով՝ գյուղացիների խանդավառ ընդունելության:

Նոյեմբերի 29-ին գեներալ Սանքալամովը հայտնում է կառավարությանը, վոր Իջևան են մտել 30—40 կարմիր բանակայիններ, վորոնք առաջարկում են սահմանապահ զինվորներին զինաթափ լինել: Չսպասելով դաշնակ հրամանատարության պատասխանին, հաղորդում է գեներալը, կարմիրները մտել են Իջևան և ձերբակալել սպաներին: Սեպուհի կարգադրությամբ ձիավոր և հետևաչ զորամասեր են ուղարկվում Իջևանի ուղղությամբ՝ դիմադրության համար: Նույն օրը Դիլիջանից հաղորդում են, սակայն, վոր Իջևանում ձերբակալվել է կապիտան Սաչատրյանը, բոլոր սպաները և քաղաքացիական վարչության անդամները: Հեղափոխական զորամասերը շարժվում են Դիլիջան:

Դեկտեմբերի մեկին, կեսօրվա ժամի 2-ին Վրացյանը հեռագրում է Սատիսովին. «Տաճիկների առաջարկած ծանր պայմանները շատ ուժեղացրին կարմիրների դիրքը, վորոնք արդեն գրավել են Դիլիջանը... Հայ զորքերը Դիլիջանում համբույրներով են ընդունել կարմիրներին: Այսպիսի պայմաններում կառավարությունը համաձայնվում է սովետիզացիայի՝ անկախության յերաշխավորության հիմքերով: Այս սկզբունքով վարվում են բանակցություններ Լեզրանի հետ»:

Ի՞նչ արժեք ունեն սակայն Վրացյանի կառավարության՝ հեղափոխական հարկադրանքի ներքո նվիրագործած այդ «համաձայնությունը»:

10.

Տակավին նոյեմբերի 29-ի յերեկոյան եր, յերբ խորհրդային Ռուսաստանի լիազոր ընկ. Լեզրանի անունով

հեռագիր ստացվեց Յերևանում Կովկասյան բանակի Ռազմա-
հեղափոխական խորհրդի նախագահ Սերգո Ոջանիկիձեյի
ստորագրությամբ՝

«Այս բռնություն տեղեկություններ են ստացվել, վոր
Հայհեղկոմը բազմաթիվ հանրագրեր ստանալով Դիլիշանի
շրջանից, գիշերն անցել է սահմանից և խանդավառ ըն-
դունելություն գտել բնակչության կողմից: Ձեռք առեք
ամեն միջոց՝ ստանալու Յերևանի կողմից Տերտերյանի և
Դրոյի խմբակցության աջակցությունը: Խոստացեք նը-
րանց տեղ տալ Հայհեղկոմի մեջ և անձի լիակատար ա-
պահովություն»:

«Անձի լիակատար ապահովություն...»: Այսպիսի յե-
րաշխավորության կարիք ունեւին այն մարդիկ, վորոնք,
մասնակցել էին Վրացյանի կարճորյա կաբլինետին և վոր-
պես «ձախ» դաշնականներ մետասաներորդ ժամին խորհրդ-
դային միասիայի ներկայացուցիչներին կողմնակից էին
հայտարարել իրենց՝ իշխանության «խաղաղ» փոխանց-
ման: Խմբապետ Դրոյի մասին Վրացյանն արձանագրեց
հետագայում, վոր դա համոզմունքով ավելի շուտ կու-
սակցության «աջ թևին պատկանող» մարդ էր և ուրիշ-
ների հետ միասին մտել էր «ձախերի» շարքը Վրացյանի
իսկ գիտությամբ՝ բայլշեիկներին ընդունելի դառնալու
համար («Հայրենիք» ամսագիր, 1922 թ. նո. 2, էջ 52):
Բայլշեիկների համար այս կարգի «ձախերի» նկարագիրը
պարզ էր սկզբից և եթ: Խմբապետ Դրոն քչերին միայն
կարող էր մոլորության մեջ ձգել, իսկ Տերտերյանին
ճանաչել էինք Լեզրանի հետ վարած իր բանակցու-
թյունների ընթացքում: Սակայն կարևոր էր ձեռք առնել
հնարավոր բոլոր միջոցները, վորպեսզի խմբապետական
վորեվե ավանսյուրա կամ ֆադաֆական վորեվե պրովո-
կացիա առիթ չտար զուր արյունահեղության: Այդ հնա-

րավոր եր, և ինչպես գրում է «Հայրենիք» ամսագրի ս. թ. հոկտ. ամսվա համարում Կարո Սասունին, իրանց մեջ կար, իսկապես, զորեղ հոսանք, վոր կողմնակից եր «դիմադրության»: «Անձի ապահովության խնդիրը» լուրջ հարց եր դաշնակ խմբապետների համար: «Դիմադրությունը» նկատվում եր, վոմանց կողմից «ճղելու» միակ «պատվավոր» ուղին: Այդ նախատեսությամբ եր հենց, վոր ընկ. Որջոնիկիձեն առաջադրում եր խմբապետ Դրոյի հետ բանակցելու խնդիրը, խնդիր, վոր ինչպես ցույց տվեց հետագայում Նժդեհի որինակը, զուրկ չեր լուրջ հիմքերից:

Զուտ իրավական տեսակետից բանակցությունների հետևանքով ստորագրված համաձայնագիրը խորհրդային միասիրտի ներկայացուցիչ Լեզրանի և Հայաստանի Ռազմա-հեղափոխական Կոմիտեի նոյեմբերի 29-ի գեկլարացիայով տապալված դաշնակ կառավարության միջև արժեքից զուրկ մի գրություն եր՝ վոր կնքում եին Հայաստանի խորհրդային անկախ հանրապետության գործերի վերաբերմամբ լիազորություն չունեցող կոնտրագենտներ: Հայաստանի Ռազմա-հեղափոխական Կոմիտեն հարգելով յերկրի անկախության սկզբունքը, առ վոչինչ համարեց գեկտեմբերի 2-ի ակտը: Իրավացի չէր Հեղկոմը: Խախտում եր այն «ընդունված սահմանադրության» հիմքերը, բռնանում «տիրող որինականության» վրա: Յեթե Մինախորյանը դրական պատասխան է տալիս այս հարցերին, այդ նշանակում է, վոր ինքն իսկ խոստովանում է անգիտակցաբար, վոր խորհրդային իշխանությունը Հայաստանում հաստատվել է, իրոք, «իշխանության հեղափոխական գրավմա՝ ճանապարհով», քանի վոր այն վոտնատակ է արել յերկրում տիրող իրավակարգը, կնքված «համաձայնագրերը» և այլն: Իսկ յեթե բացասական է Մի-

նախորդյանի պատասխանը, այդ դեպքում, իրավացի գրանցելով Հեղինակի ընթացքը, ինքն իսկ հերքած պիտի լինի իր հիմնական առարկությունը, բանի վոր դրանով կվերանա այն միամիտ միտքը, վոր իբր «իշխանությունը հանձնվել է նրանց (այսինքն՝ բայլշեիկներին) գոյություն ունեցող կառավարության կողմից վորոշ դաշնագրի հիման վրա»:

Մինախորյանը սրտնեղում է, վոր դեկտեմբերի 2 ի ակտը բայլշեիկները «կցեցին արխիվի գործերին վորպես թղթի պատառ»: Սակայն ձևականորեն բայլշեիկներից առաջ «թղթի պատառ» արխիվի գործերին կցեց հենց Վրացյանի կառավարությունը և առանձնապես՝ կառավարության անդամ Վ. Մինախորյանը, վորը իշխանությունից հրաժարվել «համաձայնելուց» հետո թատիսովի հետ մեկտեղ ստորագրում էր Ալեքսանդրապոլի հաշտության դաշնագիրը, վոր գալիս էր վոչ միայն վտանգելու Հայաստանի խորհրդային իշխանության դրությունը, այլ և հարցի տակ դնելու փաստորեն նրա... անկախությունը, վորի համար կոկորդիլոսյան արցունքներ են թափում այսօր բոլոր կարգի ու յերանգի բելոգվարդիականները և դրանց շարքում նաև... Մինախորյանը: Քաղաքական առումով Մինախորյանի ստորագրած դաշնագրի ելական մասը Տաճկաստանի ոգտին արվող հողային զիջումները չեն, այլ այն, վոր այդ դաճնագիրը նախատեսում է տանիկների միջամտությունը Հայաստանի հանրապետության գործերին: «Հարկը պահանջած դեպքում» Տաճկաստանը դաշնագրի ուժով «ոգնության» պիտի դարձնի Հայաստանի զինաթափ դաշնակներին ու եսերներին՝ յերկրի սահմանների «ներքին անդորրությունը» պաշտպանելու համար... Հողային զիջումները փաստեմն այն հաստատումն է, վոր դաճնակներն ու եսերները չալիս են ին

կանխավ նեֆին յեվ սուսաֆին թշնամուց իմա՝ հեղափոխությունից պաշտպանվելու համար:

11.

Զուր չէ, վոր սպառնալիքներով Նոյեմբերի 29-ի դեմ, Մինախորյանը մեծարուժ է Հայաստանի աշխատավորութեան դիկտատուրայի դեմ նյութված դաշնակ եսերական փետրվարյան ավանտյուրան: Բելոգվարդիական տոնացույցը «Соцнал. вестник»-ի և «Волы России» եջերից հիշատակում է փետրվարի 18-ը վորպես «Հայկական կրոնշդատ», վոր գալիս եր «փրկելու հայ ժողովուրդը ոտար տիրակալությունից»: Դաշնակներն ու եսերները վեր են հանում փետրվարյան փրկագործությունը, վորպես Հայաստանի անկախութեան տնունով բռնկված «ժողովրդական ապստամբություն»: Մեր ծրագրից դուրս է ըզբաղվելու այստեղ փետրվարյան ավանտյուրայի սոցիալաքաղաքական վերլուծութեամբ: Այստեղ և այսոր տնհրաժեշտ է ընդգծել միայն, վոր փետրվարի 18-ը քաղաքական հաշվեհաշուարի այն ուրն եր, յերբ ժողովրդական մասսաների ազատությունն ու անկախությունը վանալի հանած Վրացյաններն ու Մինախորյաններ Ալեքսանդրապոլում ստորագրած մուրհակը Կուստեդդին եճենդու միջոցով ներկայացնում էյին սանիկ զորահրամանատարությանը՝ սանձնված պարսավորություններն իրագործել չալու համար: Քաղաքական-ռազմական միջամտությունը պիտի ազատագրեր դաշնակ խմբապետներին յերկրում ծավալվող հեղափոխական տերրորից—ահա «Հայկական կրոնշդատի» քաղաքական իմաստը: Ինչպես միշտ, նույնպես, բարեբախտաբար, նաև այս անգամ, տաճիկ քաղաքականությունն ավելի հեռատես գտնվեց, քան հայ խմբապետությունը: Բայց արդյո՞ք միայն տաճիկ հրամանա-

տարությունն ե, վոր պիտի ապահովեր Ձիլինկարյաններին
 և Ոհանջանյաններին, Խոնդկարյաններին ու Մինախորյան-
 ներին «ազատությունն ու անկախությունը»... հեղափո-
 խությունից: Ընկ. Չիչերինի մերկացումներից հայտնի
 դարձավ վերջերս, թե ինչպես փետրվարյան հակահեղա-
 փոխության որերին Մոսկվայի ռադիոկայանն ունկնդրում
 էր Ֆրանսիական ադմիրալ Դյուվենիլի, Թիֆլիսի մենշե-
 վիկների և Յերևանի դաշնականների քաղցր զրույցներին:
 Ադմիրալը պատրաստվում էր ափ իջնել Բաթումում, զը-
 րավել Վրաստանն ու Հայաստանը ժողովանիայի ու վրաց-
 յանի «փրկության» անունով Լոռու մասսայական ապրս-
 տամբությունն արյան մեջ խեղդելու համար: Հայ և վրաց
 պործակալների հույսերն ի դերև յելան այս անգամ ևս: Սա-
 կայն Վրաստանի ու Հայաստանի «անկախության» վա-
 ճառքի փաստաթուղթն արձանագրվում էր մի ավելորդ
 անգամ ևս, և այդ հանգամանքն ե հենց, վոր անհրաժեշտ
 ե ընդգծել մենշևիկյան Վանդեայի և դաշնակետերական
 կրոնշդատի հակահեղափոխական իմաստը հասկանալու հա-
 մար:

*
 * *


Ժամանակակից մի գրող վորակել ե Մինախորյանին
 զբաղեցնող դեկտեմբերի 2-ի «համաձայնագիրը» «Դրո
 կանայանի Բրյուսևերի 18-ը» խոսքերով: Այդ գրողը մո-
 ռացել ե միայն, վոր Սեդանին հաջորդողը Բրյուսևերի
 18-ը չէր, այլ՝ Պարիզի կոմունան:


Կարսը հայ բռնապարտականների Սեդանն էր: Խոնդ-
 կարյանը, Մինախորյանի բարեկամը, հետագայում Հա-
 յաստան աշխարհի «փրկության» ուխտագրված ասպետ-
 ներից մինը, դեռ ևս նոյեմբերի մեկին, Կարսի անկման
 առթիվ արտասանեց Հայաստանի «պարլամենտում» մի
 ճառ, վոր սկսվում էր նշանակալից խոսքերով.

«Մեր այսորվա դրութիւնը հիշեցնում է ինձ Սեդա-
նի որերը, յերկրորդ կայսրութեան որերը. Թրանսիան
մեռավ և Թրանսիան վերածնվեց: Ըստ ամենայնի ճակա-
տագրական այս որերից հետո մենք դեռ կտեսնենք այն
որը, յերբ հայ ժողովուրդը ձեռք կբերի խաղաղութիւն
ու հանգիստ, այն որը, յերբ կվերածնվի Հայաստանը»:

«Հյուրան յեկն և յուրքն զնա վոչ ընկալան» : Վերո-
հետև Հայաստանի վերածնութիւնը պիտի սկսվեր սոցիա-
լական հեղափոխութեան յերկունքով, «համազգային կրի-
զիսի» միջոցով: Նոր որվա բացվող ճառագայթները պի-
տի խանձելին վերսալի ուղին բռնած տնաբույս «մար-
գարենների» տկար աչքերը, զրկելով նրանց տեսելու կա-
րողութիւնից:







1209

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220033662

